ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ 18/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 26 մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի, Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի մայիսի 26-ին, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Կարեն Հենրիկի Մարդանյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 18-ի թիվ ՎԻՎ 18/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը.

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ

և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, իրականացնելով դատավորների հայտարարագրերի վերլուծություն, մասնավորապես, պարզել է, որ Կարեն Հենրիկի Մարդանյանը 2021 թվականի մայիսի 26-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) «Բ.1. Անշարժ գույքը» բաժնում չի հայտարարագրել սեփականության իրավունքով իրեն պատկանող

բնակարանը: Մինչդեռ՝ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված թիվ N ՍԹ/10271-2021 գրության համաձայն՝ 25.11.2002 թվականից Կարեն Հենրիկի Մարդանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է

բնակարանը (անշարժ գույքի հաշվառման համար՝):
Նշված առերևույթ խախտման առնչությամբ 2022 թվականի մայիսի 18-ին Հանձնաժողովի որոշմամբ հարուցվել է թիվ ՎԻՎ 18/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 2022 թվականի մայիսի 18-ին Կարեն Մարդանյանը հրավիրվել է Հանձնաժողով, վերջինիս բացատրվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, և նրա մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 18/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.3 Հանձնաժողովի կողմից Երևանի քաղաքապետին 19.05.2022 թվականին է հասցեագրվել N 01/994-2022 գրությունը, որով հայցվել է տրամադրել Կարեն Մարդանյանի կողմից հայտարարագրված անշարժ գույքի հասցեի, ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված թիվ N ՍԹ/10271-2021 գրությամբ ներկայացված հասցեի և

անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 587223 վկայականում նշված հասցեների մասին տեղեկավություն:

1.4 Կարեն Մարդանյանի կողմից 2022 թվականի մայիսի 18-ին Հանձնաժողովին են ներկայացվել ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված N ԱՏ-13052022-01-0161 տեղեկանքի և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 587223 վկայականի պատճենները:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը տեղի է ունեցել 2022 թվականի մայիսի 25-ին Կարեն Մարդանյանի մասնակցությամբ, որը հետաձգվել և նշանակվել է հաջորդ օրը՝ 2022 թվականի մայիսի 26-ին՝ Հանձնաժողովի կողմից Երևանի քաղաքապետին 19.05.2022 թվականի N 01/994-2022 գրությամբ կատարված հարցման պատասխանը ստանալու անհրաժեշտությամբ պայմանավորված:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

2.1 Կարեն Մարդանյանը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը բացատրությամբ հայտնել է, որ Հայտարարագրում հայտարարագրել է իրեն համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակարանը: Նշված բնակարանը նախկինում՝ 1980-ական թվականներին եղել է հասցեով: Դրանից հետո տեղի է ունեցել հասցեի փոփոխություն և հասցեն վերանվանվել է փողոց, շենքի համարը չի կարող նշել: Նշված բնակարանը սեփականաշնորհվել է 1994 թվականին: Դրանից հետո, ստույգ տարեթիվը չի կարող նշել, կրկին տեղի է ունեցել հասցեների փոփոխություն և հասցեն դարձել է որտեղ ինքը հաշվառված է և այն հայտարարագրել է իր բոլոր հայտարարագրերում: Նշվածով պայմանավորված՝ պնդել է, որ թվարկված հասցեների ներքո նշվածը հանդիսանում է միևնույն բնակարանը:

2.2 Կարեն Մարդանյանի կողմից N Մ-2237-2022 գրությամբ Հանձնաժողով է ներկայացվել գրավոր պարզաբանում, որում ի թիվս այլ պարզաբանման ենթակա

հարցերի վերաբերյալ պարզաբանումների, ներկայացրել է նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում քննարկվող ենթադրյալ իրավախախտման վերաբերյալ պարզաբանում՝ մասնավորապես, մատնանշելով իր կողմից հայտարարագրված բնակարանի հասցեների փոփոխության հանգամանքը:

Կարեն Մարդանյանը գրավոր պարզաբանմամբ նաև հայտնել է, որ բացի նշված բնակարանից, սեփականության իրավունքով իրեն պատկանող այլ բնակարան չունի:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի քննություն, հաստատված է համարում հետևյալը.

3.1 Կարեն Մարդանյանը Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույքը» բաժնում չի հայտարարագրել սեփականության իրավունքով իրեն պատկանող

հասցեում գտնվող բնակարանը: Մինչդեռ, ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված թիվ N ՍԹ/10271-2021 գրության համաձայն՝ 25.11.2002 թվականից Կարեն Հենրիկի Մարդանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է

գտնվող բնակարանը (անշարժ գույքի հաշվառման համար՝):

3.2 ՀՀ կադաստրի կոմիտեի N ԱՏ-13052022-01-0161 տեղեկանքի համաձայն՝

հասցեն և թիվ 587223 վկայականով (Կարեն Մարդանյանի կողմից ներկայացված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենի հետ նույնական են) գրանցված

հասցեն վերաբերում է միևնույն անշարժ գույքին:

3.3 Հանձնաժողովի նախագահին ուղղված Երևանի քաղաքապետի 2022 թվականի մայիսի 25-ի N 01/25328-22 գրության համաձայն՝ Քաղխորհրդի 1989

թվականի հուլիսի 5-ի հ.14/27 որոշմամբ՝ Աղաբաբյան փողոցը վերանվանվել է Զորավար Անդրանիկի անվամբ:

Նույն գրության համաձայն՝ բազմաբնակարան բնակելի շենքի կառավարումն իրականացնող «Լիլիա» համատիրության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝
բնակարանի նոր հասցեն է՝ :

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.

4.1 Կարեն Մարդանյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, գույքի մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու համասեփականատիրոջ բաժինը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը:

4.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.6«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

4.7 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ իրավախախտան դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Կարեն Մարդանյանը Հայտարարագրում «Բ.1. Անշարժ գույքը» բաժնում հայտարարագրել է համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարանը:

Այսպես, Կարեն Մարդանյանի կողմից 2022 թվականի մայիսի 18-ին Հանձնաժողովին է ներկայացվել բնակարանի վերաբերյալ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 587223 վկայականի պատճենը:

Կարեն Մարդանյանի կողմից 2022 թվականի մայիսի 18-ին Հանձնաժողովին է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված N ԱՏ-13052022-01-0161 տեղեկանքի պատճենը, որի համաձայն՝

հասցեն և թիվ 587223 վկայականով (Կարեն Մարդանյանի կողմից ներկայացված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենի հետ նույնական են) գրանցված ք.

բնակարան հասցեն վերաբերում է միևնույն անշարժ գույքին:

Հանձնաժողովի նախագահին ուղղված Երևանի քաղաքապետի 2022 թվականի մայիսի 25-ի N 01/25328-22 գրության համաձայն՝ Քաղխորհրդի 1989 թվականի հուլիսի 5-ի հ.14/27 որոշմամբ՝ Աղաբաբյան փողոցը վերանվանվել է Զորավար Անդրանիկի անվամբ:

Նույն գրության համաձայն՝ բազմաբնակարան բնակելի շենքի կառավարումն իրականացնող «Լիլիա» համատիրության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝

բնակարանի նոր հասցեն է՝ :

Ամփոփելով վերոգրյալը, Հանձնաժողովը, հիմնվելով գործի քննության արդյունքում ձեռք բերված փաստերի վրա, արձանագրում է , որ

բնակարանի,

բնակարանի և

բնակարանի հասցեները վերաբերում են միևնույն անշարժ գույքին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2022 թվականի մայիսի 18-ին հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 18/22 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Մարդանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**